ԱՊԱՀՈՎ ՀԱՄԱՑԱՆՑ

(սցենար)

Երևանի թ 181 հիմնական դպրոց

Գայանե Մկոյան

Բարև Ձեզ, քանի որ համացանցը մտել է մեր առօրյա, և մենք այլևս չենք պատկերացնում մեր կյանքն առանց համացանցի: Այսօրվա մեր դասի թեման է ապահով համացանցը:

դասի նպատակն է

–Ձեռք բերել գիտելիքներ ապահով համացանցի գործածման վերաբերյալ:

- Հասկանալ առավելություններն ու թերությունները:

-Կարողանալ խուսափել բազմաթիվ վտանգներից:

Դրա համար նախ հասկանանք, թե ինչ է համացանցը, ապա կխոսենք նրա առավելությունների ու թերությունների մասին:

Հարց աշակերտներին. - ով կասի ինչ է համացանցը? Երեխաները քննարկում են…

Համացանցը հսկայածավալ ինֆորմացիոն տարածք է, որը հնարավորություն է տալիս միլիոնավոր մարդկանց համագործակցել: Այն փոխում է մարդկանց շփման,

հաղորդակցման և գործարարության ձևերը, ինչպես նաև ժամանցի եղանակները: Համացանցն այսօր պետական սահմաններ չի ճանաչում, բայց ինչպես առօրյա կյանքում մենք կարող ենք հանդիպել լավ ու վատ երևույթների, այնպես էլ վիրտուալ տարածքում: Այսպիսով կարող ենք ասել, որ Համացանցն էլ կյանք է էլեկտրոնային միջավայրում և ունի իր առավելություններն ու թերությունները:

Հարց աշակերտներին.-կարող ենք ասել Ինչ առավելություններ ունի համացանցը?

Երեխաները քննարկում են…

Այո, ցանցում մարդիկ կարող են շփվել անտեսելով սահմանները: Արագորեն ստանալ ինֆորմացիա, փոխանակել ֆայլեր:

Բայց բացի այս ամենից և ձեր շատ սիրելի խաղերից, համացանցը հագեցած է գրադարաններով, թանգարաններով, կրթական բազմաբովանդակ նյութերով և եթե այն օգտագործենք կրթական նպատակներով և զարգացնենք մեր ստեղծագործ ունակությունները, ապա դա կլինի Համացանցի ամենամեծ առավելությունը: Բայց այս ամենի հետ մեկտեղ Համացանցի վտանգները օրեցօր շատանում են: Այսինքն կարող ենք ասել, որ Համացանցն ունի նաև ԻՆՉԵՐ ?թերություններ

Հարց աշակերտներին . ապա ինչ թերություններ կարող եք թվարկել

Երեխաները քննարկում են…

Այսինքն թերությունները կամ վտանգները ունեն ոչ միայն տեխնիկական, այլ նաև անձնական բնույթ: Ասեմ, որ օր օրի ավելանում են նաև վնասակար ծրագրերը, դրա համար պետք է օգտագործել օպերացիոն համակարգերի հնարավորությունները կամ տեղադրել հատուկ ծրագրեր: Վնասակար ծրագրերի տարածման ճանապարհներ են էլեկտրոնային փոստը, ֆայլերի փոխանակման համակարգերը, կոտրված կայքերը, տեղեկույթի կրիչները, ոչ արտոնագրված ծրագրերը և օպերացիոն համակարգերի խոցելի գործառույթների օգտագործումը: Որպեսզի խուսափենք նման երևույթներից, պետք է հետևել անվտանգության, հաղորդակցության, զվարճանքի և կիբերհետապնդման ոսկե կանոններին:

Հարց - կարող ենք կանոնները ասել

Նախ անվտանգության ոսկե կանոնները: Ժենյա, Անի, Ինեսա

Կիրառե՛ք հակավիրուսային, հակալրտեսային և փոստաղբազտիչ ծրագրեր: Համացանցում նավարկեք պաշտպանված համակարգչով:

-Ինեսա 2. Եթե համակարգիչը տարօրինակ է պահում, հնարավոր է այն վիրուս ունի: Անմիջապես դիմե՛ք մասնագետին:

-Ժենյա 3. Բացե՛ք միայն ծանոթներից ստացված նամակները:

-Անի 4. Առանց զննելու մի բացե՛ք էլ-նամակներին կցված ֆայլերը:

-Ինեսա 5. Ձեր էլեկտրոնային փոստի հասցեն գաղտնի պահե՛ք և մի հրապարակե՛ք ցանցում:

-Ժենյա 6.Խուսափե՛ք բջջային կապով ուղարկվող փոստաղբից: Ձեր համարը տվե՛ք միայն ծանոթ մարդկանց:

-Անի 7. Իսկ հիմա մեր գիտելիքները ստուգենք թեստի միջոցով:

http://safe.am/esafetykit/start.html

Մեր գիտելիքները ստուգելու համար Առանձնացրել եմ հետաքրքիր թեստեր http://www.safe.am կայքից: Պայմանավորվենք այսպես- Մարին թող կարդա հարցերը, ով որ տարբերակը կհամարի ճիշտ ձեռք կբարձրացնի և կընտրենք այն պատասխանը, որի ժամանակ ձեռքերը շատ կլինեն:

-Մարի 1. թեստ

անպայման ճիշտ պատասխանին անդրադառնալ

Արդյունքը

Հաղորդակցության ոսկե կանոնները - Նաիրա, Ժաննա, Աստղիկը2 . Եղիր պատասխանատու ցանցում, մի եղիր էկրանի ետևում:

- Նաիրա 2. Օգտվի՛ր մոդերատոր ունեցող պատանեկան զրուցարաններից:

-Ժաննա 3. Մի տարածի՛ր վնասակար հաղորդագրություններ, նկարներ և նյութեր:

- Աստղիկ 4. Ստեղծի՛ր ապահով էջ:

-Նաիրա 5. Նկարները փոխանցի՛ր միայն ծանոթ և վստահելի մարդկանց:

-Ժաննա 6. Սովորի՛ր մերժել և արգելափակե՛լ անցանկալի կապերը:

-Աստղիկ 7. Մերժի՛ր անծանոթների առաջարկները:

-Նաիրա 8. Հրաժարվի՛ր հանդիպել անծանոթների հետ, եթե նույնիսկ նրանք քո առցանց ընկերներն են: Ծնողներիդ ասա. Ավելի լավ է ապահով լինել, քան ափսոսալ:

- Ժաննա 9. Եթե համացանցից չես օգտվում, այն անջատի՛ր:

-Աստղիկ 10. Վեբ խցիկն օգտագործի՛ր ծանոթների հետ շփվելիս: Անջատի՛ր այն, եթե չես օգտագործում:

-Նաիրա 11. Երեխաները կներկայացնեն թեստը հաղորդակցության վերաբերյալ: http://safe.am/esafetykit/start.html

Մեր գիտելիքները ԿԱՐՈՂ ԵՆՔ վերստուգել թեստի միջոցով:

Թեստ. անպայման ճիշտ պատասխանին անդրադառնալ

Արդյունքը

ԱՆԴՐԱԴԱՌՆԱՆՔ կիբերհետապնդման ոսկե կանոններին: Գագիկ, Սամսոն

Այժմ ստուգենք մեր գիտելիքները թեստի միջոցով

անպայման ճիշտ պատասխանին անդրադառնալ

Արդյունքը

Լավ, խոսեցինք այս լուրջ ու վտանգավոր երևույթների մասին, բայց էնպես չի, որ մենք վախենալու կամ հրաժարվելու ենք համացանցից, մանավանդ որ համացանցը օգտագործում ենք նաև զավարճանքի համար: Բայց զավարճանքը՝ զավարճանք, այս դեպքում էլ կան կանոններ, որոնք պարտավոր ենք իմանալ և կիրառել:

ինչ կանոններ գիտենք? Արամեն, Տիգրանը և Հրաչը

Զվարճանքի ոսկե կանոնները կներկայացնեն

Հ.: 1. Հիշե՛ք, որ համացանցից երաժշտություն և ֆիլմեր ներբեռնելը անօրինական է, եթե չեք օգտագործում օրինական կայք:

-Արամե 2. Մի վստահե՛ք չափից լավ հնչող բառերին:

-Տիգրան 3. Պաշտպանե՛ք Ձեր համակարգիչը: Արտոնագրված ֆայլեր ներբեռնելիս օգտագործեք նորացված հակավիրուսային ծրագրեր:

-Հրաչ 4. Ներբեռնելիս ֆայլը պահպանելուց և զննելուց հետո միայն բացեք:

-Արամե 5. Անծանոթ կայքերից խաղեր մի ներբեռնե՛ք: Զննե՛ք հակավիրուսային ծրագրով:

-Տիգրան 6. Անձնական էջ ստեղծելու, զրուցելու և խաղալու ժամանակ միշտ պահպանե՛ք ձեր մասնավորությունը:

-Հրաչ 7. Անձնական տվյալները լրացրե՛ք միայն լիովին վստահելի առցանց ձևաթղթերում:

-Արամե 8. Եթե բաժանորդագրվել եք կասկածելի ծառայությանը, դիմե՛ք Ձեր ծնողներին. բոլորն էլ կարող են սխալվել:

-Տիգրան 9. Փակե՛ք դուրս լողացող պատուհանները, սեղմելով աջ անկյունի կարմիր նիշը: Երբեք մի սեղմեք պատուհանի ներսում:

-Հրաչ 10. Թեստ զվարճանքի վերաբերյալ: http://safe.am/esafetykit/start.html

Այսքանով ամփոփենք մեր կողմից քննարկված թեման, նշենք գլխավորը՝ պետք չէ Համացանցը դարձնել բնակավայր: Այն ընդամենը օժանդակ գործիք է, որը պետք է խելամիտ օգտագործել հակառակ դեպքում կհայտնվենք սարդոստայնում:

Եվ որպեսզի երեխաները ճիշտ մեծանան բազմաթիվ էկրաններով շրջապատված միջավայրում, մենք պատրաստ ենք պարբերաբար կազմակերպել ավելի հետաքրքիր բաց դասեր Ապահով Համացանց թեմայով, ինչպես նաև ծնողական ժողովներ և ուսուցողական այլ միջոցառումներ: